ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____2014թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Քանաքեռ 14-րդ փողոցի հ.40 շենքի հ.22 85.16քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման հ.24072013-01-0224 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Դոնարա Հարությունյանին :

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

§ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ¦ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Քանաքեռի 14-րդ փողոցի հ.40 շենքի հ.22 բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել երկարամյա և բարեխիղճ պետական-հասարակական գործունեության համար §Հայրենիքին մատուցած ծառայությունների համար¦ 1-ին աստիճանի մեդալի արժանացած, Գյումրիի պատվավոր քաղաքացի, խորհրդային իշխանության ժամանակներում ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեում 35 տարիների աշխատանքային հարուստ կենսագրություն ունեցող, այդ թվում՝ 9 տարի առաջին քարտուղարի պաշտոնում, §Շիրակ հայրենակցական միավորում¦ հասարակական կազմակերպության երկարամյա ղեկավար Դոնարա Հարությունյանին :

Մեծ վաստակ ունի Դոնարա Հարությունյանը և ամենափայլուն տեղն է գրավում Սովետական Հայաստանի կին ղեկավարների աստղաշարքում:Նրա ղեկավարման տարիներին բացվել են բազմաթիվ մշակութային և հանգստի կենտրոններ:

Անհատին կարևորելու և գնահատելու, մարդկանց համախմբելու նրա կարողության, սկզբունքայնության, պետության հանդեպ ունեցած անմնացորդ նվիրվածության շնորհիվ արժանացել է հարգանքի ու վստահության:

Տարիների հեռավորությունից արվեստի ու մշակույթի գործիչները այսօր էլ հիացմունքով ու հպարտությամբ են արտահայտվում, ինչպես նաև գնահատում են իրենց նկատմամբ նրա պաշտոնավարման տարիներին ցուցաբերած առանձնահատուկ հոգատար և ջերմ վերաբերմունքը:

Երկրաշարժից հետո, հանգամանքների բերումով Դոնարա Ասքանազի Հարությունյանը տեղափոխվել է Երևան և մինչև 2013 թվականը զբաղվել է դասախոսական աշխատանքով և այժմ տղայի չորս անձից բաղկացած ընտանիքի հետ միասին բնակվում է երկու սենյականոց 35.5ք.մ բնակելի մակերեսով բնակարանում:

Հայաստանի Հանրապետությունում բացառիկ հեղինակություն վայելող հայրենասեր ու բարոյական բարձր հատկանիշներով օժտված, իր էությամբ իրականում ազնիվ ու անբասիր մտածողության տեր պետական-հասարակական գործչի ավանդապահ ընտանիքի բնակարանային պայմանները բարելավելու միջնորդություններ են ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Մկրտիչ Մինասյանը և §Շիրակ հայրենակցական միավորում¦ հասարակական կազմակերպության նախագահ Վարազդատ Ավոյանը:

Հաշվի առնելով վերահիշյալը և այն, որ 82-ամյա Դոնարա Ասքանազի Հարությունյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության տարածքում չունի այլ անշարժ գույք, առաջարկվում է ի նշան երախտագիտության ու գնահատանքի նշված բնակարանը նվիրել վերջինիս:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ